Տորունիք

Բնակչություն՝ 181

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 121 կմ,
Հիեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 17 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1840 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Տորունիք գյուղը գոյություն է ունեցել միջին դարերում և հիշատակվում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի կողմից: Նախկինում ադրբեջանցիների կողմից անվանվել է նաև Կզլշաֆագ: 1990թ. գյուղը կրկին ստացել է իր պատմական անունը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 38 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 207գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 406 գլուխ,
- խոզեր՝ 12 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 254:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 10 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1759 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1717 հա, որից՝
- վարելահող՝ 158 հա, բազմամյա տնկարկ՝ 9 հա, խոտհարք՝ 59 հա, արոտ՝ 995 հա, այլ հողատեսք՝496 հա
- բնակավայրերի հողեր՝ 25 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6 հա,
- ջրային հողեր՝ 1 հա